



**«ՀԱՄԱԶԱՐԿ»՝ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ»  
ԿՈԱԼԻՑԻԱՅԻ  
«ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ» ԾՐԱԳՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՄԱՍՆԱԿԵՏԻ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Աշխատանքի վայր	Ք. Գյումրի, «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ
Հաստիքի անվանում	Հասարակայնության հետ կապերի մասնագետ
Դիմելու վերջնաժամկետ	Հունվարի 25, 2019թ.
Աշխատանքի սկիզբ ել ավարտ	Փետրվարի 1, 2019թ-Հունիս 30, 2019թ
Աշխատանքի ծավալ	Ոչ լրիվ դրույք (5-օրյա, շաբաթական 20 ժամ)
Հաստիքի նկարագրություն	Ծրագրի ընթացքի, արդյունքների լուսաբանում, հանրության հետ հաղորդակցում, միջոցառումների նախապատրաստում, ծրագրի հաշվետվողականության և թափանցիկության ապահովում:

**Ծրագրի մասին**

«Համաձարկ»՝ «Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման» կոալիցիան ստեղծվել է 2018թ. հոկտեմբերի 5-ին՝ միավորելով Հայաստանի բոլոր մարզերը ներկայացնող 34 ՔՀԿ-ներ՝ զարգացած, «խելացի» ու մասնակցային սկզբունքով կառավարվող համայնքների ստեղծման գաղափարի շուրջ: Կոալիցիան ձևավորվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից ղեկավարվող կոնսորցիումի կողմից գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ենթադրամաշնորհով իրականացվող «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ն՝ իր գործընկերներ «ՀԿ Կենտրոն» ՔՀԶԿ, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ և «Տեղեկատվական համակարգերի զարգացման եվ վերապատրաստման կենտրոն» ՀԿ հետ ձևավորած կոնսորցիումի միջոցով:

*Ծրագրի բյուջեն կազմում է 8.494.000 ՀՀ դրամ, որից 7.644.000 ՀՀ դրամը «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կողմից տրամադրված ֆինանսավորումն է, իսկ 850.000 ՀՀ դրամը՝ «Կոմպասս» կենտրոնի ներդրումը: Ծրագիրը մեկնարկել է 2019թ. հունվարի 1-ին և իրականացվելու է մինչև 2019 թվականի հունիսի 30-ը:*



**Ծրագրի հիմնական նպատակն է** նպաստել Կոալիցիայի և կոալիցիայի անդամ կառույցների կարողությունների զարգացմանը՝ ի նպաստ ՀՀ ամբողջ տարածքում խոշորացված համայնքների գործունեության բարելավմանը:

### Անհրաժեշտ որակավորում

- Բարձրագույն կրթություն,
- Առնվազն 1 տարվա աշխատանքի/կամավորության/ փորձ ՀԿ և հասարակայնության հետ կապերի ոլորտում,
- Թիմում աշխատելու հմտություններ,
- Պետական և քաղաքացիական հասարակության կառույցների հետ դրական աշխատանքային հարաբերությունների և համագործակցելու կարողություն,
- Հայերենի գերազանց իմացություն /անգլերենի իմացությունը ցանկալի է/,
- Համակարգչային ծրագրերից օգտվելու լավ հմտություններ (adobe photoshop, adobe illustrator),
- Ծրագրերում կազմակերպչական աշխատանքների փորձը կոլիտարկվի առավելություն:

### Աշխատանքային պարտականություններ

- Պետական և հասարակական կազմակերպությունների հետ կապերի հաստատում,
- Ծրագրի տեսանելիության ապահովում մամուլում և այլ հարթակներում,
- Ծրագրի ընթացքի և արդյունքների լուսաբանում,
- Ինֆոգրաֆիկաների պատրաստում և տարածում,
- Ծրագրի հանրային միջոցառումների կազմակերպման ու իրականացման մասնակցություն,
- Ծրագրի ղեկավարի կողմից ծրագրին առնչվող այլ հանձնարարությունների իրականացում:

### Աշխատանքի վարձատրության կարգ

Հասարակայնության հետ կապերի մասնագետի հետ կկնքվի հնգամսյա տևողության աշխատանքային պայմանագիր՝ նախօրոք սահմանված աշխատանքի վարձատրությանը համապատասխան:

### Աշխատակցին տրվող առավելություններ

- Մասնագիտական առաջխաղացում, ազատ ստեղծագործելու հնարավորություն,
- Վերապատրաստումների, զարգացման հնարավորություն:

### Դիմումների ներկայացման կարգ

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են մինչև **2019թ. հունվարի 27-ը ժամը 18:00-ն** ուղարկել ինքնակենսագրական (լուսանկարով) և մոտիվացիոն

*Ծրագրի բյուջեն կազմում է 8.494.000 ՀՀ դրամ, որից 7.644.000 ՀՀ դրամը «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կողմից տրամադրված ֆինանսավորումն է, իսկ 850.000 ՀՀ դրամը՝ «Կոմպասս» կենտրոնի ներդրումը: Ծրագիրը մեկնարկել է 2019թ. հունվարի 1-ին և իրականացվելու է մինչև 2019 թվականի հունիսի 30-ը:*



նամակ [compassgyumri@gmail.com](mailto:compassgyumri@gmail.com) էլ- հասցեին՝ նամակի վերնագրում նշելով հաստիքի անվանումը («Հասարակայնության հետ կապերի մասնագետ»):

Պահանջները բավարարող թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

Հարցերի դեպքում դիմել ծրագրի ղեկավար Հայկարամ Դրմեյանին,  
Հեռ.՝ (+374) 98 181519  
Էլ. հասցե՝ [drmeyan92@gmail.com](mailto:drmeyan92@gmail.com)

*Ծրագրի բյուջեն կազմում է 8.494.000 ՀՀ դրամ, որից 7.644.000 ՀՀ դրամը «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կողմից տրամադրված ֆինանսավորումն է, իսկ 850.000 ՀՀ դրամը՝ «Կոմպասս» կենտրոնի ներդրումը: Ծրագիրը մեկնարկել է 2019թ. հունվարի 1-ին և իրականացվելու է մինչև 2019 թվականի հունիսի 30-ը:*